«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլհասցե՝ www.ysu.am, board@ysu.am

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2024 թ. նոյեմբերի 11-ին հարցման կարգով անցկացված թիվ 3 նիստի**

**ք. Երևան** **11.11.2024 թ.**

2024 թվականի նոյեմբերի 11-ին հարցման կարգով անցկացվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի թիվ 3 նիստը: Քվեարկությանը մասնակցել են ՀՀ վարչապետի 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 17 անդամներից 15-ը (քվեաթերթիկները կցվում են):

**Հարցման կարգով անցկացվող Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը հետևյալն են.**

**1**. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունում:
**2**. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար բաց մրցույթի հայտարարում:
**3**. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 11_Լ որոշման հավելվածում (եկամուտների և ծախսերի նախահաշիվ՝ բյուջե) փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունում:

**1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունում:**

Առցանց եղանակով օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ անցկացված քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

**Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.**
«Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է.**

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից 2020 թվականի հունվարի 31-ին ընդունված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգում» կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 2.2 կետում «առնվազն 40 օր առաջ, ռեկտորի» բառերը փոխարինել «առնվազն 30 օր առաջ, տնօրենի» բառերով,

2) Կանոնակարգի 2.4 կետի «դ» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«դ) թեկնածուի բարձրագույն կրթության դիպլոմի և գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենները»,

3) Կանոնակարգի 3.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3.2 ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն կարող է առաջադրվել այն անձը, որն ունի գիտական աստիճան: Նույն անձը չի կարող ավելի քան անընդմեջ 2 անգամ ընտրվել ԵՊՀ մասնաճյուղի տնօրեն:»:

**2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար բաց մրցույթի հայտարարում:**

Առցանց եղանակով օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ անցկացված քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

**Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.**

«Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է.**

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարել բաց մրցույթ:

1. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի մրցութային ընտրությունն անցկացնել 2024 թ. դեկտեմբերի 25-ին:»:

**3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 11_L որոշման հավելվածում (եկամուտների և ծախսերի նախահաշիվ՝ բյուջե) փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունում:**

Առցանց եղանակով օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ անցկացված քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

**Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.**

«Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 8-րդ ենթակետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 11-Լ որոշման հավելվածի փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:»:

**Խորհրդի նախագահ՝** **Ս. Պապիկյան**

**Խորհրդի քարտուղար՝** **Ե. Կիրակոսյան**